Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 572 - Ա
որոշման

«ՀԱՏՈՒԿ ԾՆՈՂՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակներն են • Հաշմանդամություն ունեցող երեխաների համար օժանդակ և հարմարեցված գույքի ու կահույքի /քայլակ, աթոռ, սեղան/ հասանելիության բարելավում • «Սորս» հիմնադրամի սոցիալական ձեռնարկության փայտամշակման արտադրանքի բազմազանեցում • Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար աշխատանքային հնարավորու-թյունների ընդլայնում և սոցիալական միջոցառումներին հատուկ կարիքներ ունեցող երեխաների մասնակցության բարձրացում: Ծրագրի անհրաժեշտությունը: Շուկայում չկան արտադրողներ, իսկ ներմուծվող արտադրանքը շատ թանկ է և մատչելի չէ սոցիալապես անապահով ընտանիքների համար: Օժանդակ և հարմարեցված գույքի ու կահույքի տեղական արտադրությանն աջակցելը կնպաստի, որ դրանք հասանելի դառնան սոցիալապես անապահով ընտանիքների համար, ինչպես նաև իր ներդրումը կունենա նույնիսկ ամենախոցելի երեխաների կյանքի որակի բարելավման գործում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Իզմիրլյան Բարեգործական Հիմնադրամ (գրանցման համար՝ 222.160.1107031, հասցե՝ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/1) ՀՎՀՀ՝ 02819088 (7,400,000 դրամ) և անհատ բարերարներ (2,360,000 դրամ):

4.	Ծրագիրը կատարողը	«Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ ք. Երևան, Նաիրի Զարյան 19, բն. 29, ՀՎՀՀ՝ 00128663
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայրն է ՀՀ, ք. Երևան Ավան Առինջ, 1-ին միկրո շրջան, Տաշքենդի փող. թիվ 7 մանկապարտեզ: ՀՀ, ք. Երևան Նորք Մարաշ 13 փողոց 38 տուն, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 9,760,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքների հաշմանդամություն ունեցող երեխաների 10 ծնողներ, որոնք աշխատում են արտադրամասում և աշխատանքով են ապահովվում: Հիմնադրամը այս ծրագրով ձեռք բերված սարքավորումների միջոցով պատրաստված գույքով պետք է հագեցնի Իզմիրյան մանկատան սենյակները, որից կօգտվեն 103 Իզմիրյան մանկատան ծանր հաշմանդամություն ունեցող երեխաները: Ծրագրի ընթացքում ամբողջովին անվճար հիմունքներով կվերապատրաստվեն և հմտություններ կսովորեն շուրջ 20 և ավել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ և քույր ու եղբայրներ: Ինչպես նաև տարեկան մինչև 150 հաշմանդամություն ունեցող երեխաների կամ կենտրոնների որտեղ հաճախում են նման երեխաներ անհատույց տարբեր դրամաշնորհների շրջանակներում տրամադրվում է գույք և ադապտացիաներ, որոնք արտադրում են այս և արտադրամասում առկա մնացած սարքավորումներով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20 սեպտեմբեր 2020 թ. – 31 դեկտեմբերի 2021 թ. Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանում չկա հաշմանդամություն ունեցող երեխաների համար աթոռակներ, սայլակներ, կանգնակներ անհատական ադապտացիաներ, սենսորային խաղալիքներ, մատեր, բարձիկներ արտադրող կազմակերպություն: Իսկ մեր հասարակության մի մեծ հատված՝ ՀՀ-ում միայն պաշտոնապես գրանցված 8651 հաշմանդամություն ունեցող երեխա ունի այս ամենի կարիքը: Հետևաբար մենք մեր ծրագրով հասարակության մի մեծ հատվածի կտանք հնարավորություն իրենց երեխաների, իրենց և իրենց ընտանիքների համար կյանքի նորմալ պայմաններ ստեղծելու և ինտեգրվելու ու դառնալու մեր ՔՀԿ լիարժեք անդամներ:

		Ծրագիրը ներառում է սոցիալական նշանակալի ազդեցություն ունեցող բաղադրիչ: Ծրագրի շրջանակներում «Սորս» հիմնադրամը «Մարի Իզմիրլյանի անվան մանկատան» (ՄԻՄ) երկու սենյակ, մասնավորապես՝ ֆիզիոթերապիայի և խմբային թերապիայի սենյակները, կկահավորի ՄԻՄ-ի երեխաների հատուկ կարիքների համար նախատեսված անհրաժեշտ փափուկ և փայտե կահույքով: Ավելին, ծրագրի շրջանակներում «Սորս» հիմնադրամի փորձագետների թիմը մանկատան աշխատակիցներին կվերապատրաստի տրամադրվող օժանդակ և հարմարեցված պարագաների օգտագործման վերաբերյալ: Նաև ծրագրի ընթացքում ամբողջովին անվճար հիմունքներով կվերապատրաստվեն և հմտություններ կսովորեն շուրջ 20 և ավել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ և քույր ու եղբայրներ: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները /միջոցառումների իրակա-նացման նախատեսվող ժամկետներն են 2020 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները/՝ 1. Սարքավորումների ձեռք բերում (փայտամշակման երկու հաստոցներ SQUADRATRICE QUADRA 400 – 4,500,000 դրամ, GF23 հաստոց 3,000,000 դրամ) – Փայտամշակման սարքավորումների ձեռք բերում կամ ներմուծում սարքերի, սարքավորումների ներմուծում և/կամ ձեռք բերում - 7,500,000 դր 2. Հումքի ձեռք բերում – 900,000 դրամ 3. Տրանսպորտային ծախսեր – 600,000 դրամ 4. Անձնակազմի (մասնագետներ՝ արտադրության ղեկավար, ծրագրի ղեկավար, հաշվապահ, կարուձևի մասնագետներ, փայտամշակման արտադրամասի աշխատակիցներ) աշխատավարձ – 760,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ձեռք բերել 1. Փայտամշակման սարքավորումների ձեռք բերում կամ ներմուծում սարքերի, սարքավորումների ներմուծում և/կամ ձեռք բերում՝ (փայտամշակման երկու հաստոցներ SQUADRATRICE QUADRA 400- 4,500,000 դրամ, GF23 հաստոց 3,000,000 դրամ) – Փայտամշակման սարքավորումների ձեռք բերում կամ ներմուծում սարքերի, սարքավորումների ներմուծում և/կամ ձեռք բերում – 7,500,000 դրամ

		2. Հումքի ձեռք բերում – 900,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը հետևյալն են՝ 1. Տրանսպորտային ծախսեր – 600,000 դրամ 2. Աշխատավարձի գծով ծախսեր – 760,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում համագործություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում վերահսկողությունը կիրականացվի «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակությունը տրամադրող կազմակերպության կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ